

Տարեկան գինը 10 րուբլի, կես տարեկան 6 րուբ.  
Առանձին համարները 5 կոպեկով.  
Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.  
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.  
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.  
Տ է Լ Է Ֆ օ Ն Ք 253.

# ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և առն օրերէն)  
Յայտարարութիւն ընդունելու է ամեն լիկուով.  
Յայտարարութիւններ համար վճարում են.  
Խրաքանչիւր բառին 2 կոպեկ.  
Տ է Լ Է Ֆ օ Ն Ք 253.

Հիմնադրող Գրիգոր Արծրունի

## ԲՈՎԱՆԿԱՎՈՒԹԻՒՆ

Ներքին Տեսութիւն. Մամուլ. Նամակ էջ-  
միածնից. Նամակ Կարօց. Ներքին լուրեր.  
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Լուրեր Կ. Պօլսից.  
Փրանսիա. Արտաքին լուրեր. — ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ.  
— ՅԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.  
Անդրադարձ գրեթէ ամեն օր:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ. Ա. Մ. ՈՒՆԻ

Թէ՛ն գրաբարի ու աշխարհաբարի հարցը ան-  
զաւանդի կերպով վճռվել է օտո կէս դար մե-  
զանից առաջ և վճռվել է կատարեալ և վերջ-  
նական յաղթանակ պարգևելով աշխարհաբարին,  
բայց գրաբարամուտները դեռ այժմ էլ շարուն-  
ակվում է մեր մէջ և մի մի անգամ հաւա-  
նանքներով դուրս է գալիս ողբալու իր նախկին  
փառքը, երբ նա իր ձեռքին ունէր գրական մե-  
նաշնորհը, երբ նա գրում էր, իսկ հաղորդելից  
մէկը գլուխ էր պատռում նրան հասկանալու  
համար: Վենետիկն էր, որ գրաբարը աշխարհ-  
վերջնական անկումից, ծաղկեցրեց, դարձրեց իր  
լեզուն և երկար, շատ երկար ժամանակ հայ  
գրականութեան միակ ուժեղ ներկայացուցիչն  
էր, մատակարարում էր հայ ընթերցողներին  
այնպիսի մտաւոր կերակուր, որպիսին ինքն էր  
կամենում, տալիս էր ինչ ուղղում էր, աւելորդ  
համարելով տեղեկանալ թէ ինչ է կարօտ ժո-  
ղովորդը, ինչ տեսակ մտւում է հարկաւոր նը-  
րան: Այդ մենաշնորհը, որ հայոց գրականու-  
թեան մէջ մտցրել էր կղերական-բարոյախօսա-  
կան միակողմանի ուղղութիւն, փառաւոր կեր-  
պով ջարդվեց, ոչնչացաւ, երբ ծնունդ առաւ աշ-  
խարհաբար լեզուն, որին մեռած ու քարացած  
գրաբարի երկրպագուները այժմ էլ տալիս են  
գոռոցիկ կամ «առաքիլ» անունը, անշուշտ ի-  
րանց արձամարհանքը ցոյց տալու համար: Բայց  
ինչպիսի անուան մէջ չէ. անուանեցէք աշխար-  
հաբար ինչպէս կամենում էք, բայց չէք կարող  
չնշել նրա էական յատկութիւնը—կենդանի, ժո-  
ղովորդական լեզուն: Նա, թէ՛ն դեռ լիցի, դեռ  
չը վարդացած, հարկադրեց, որ գրաբարի միջ-  
նաւը կողմնակիցներին էլ հպատակվեն իրան:  
Վենետիկը թէ՛ն դժգոհութեամբ, թէ՛ն հարկը ու  
մի գանգատներով, բայց ընդունեց աշխարհա-  
բարը. դա արդէն յաղթանակի ծայրագոյն կէտն  
էր: Զիչ է, վենետիկցի վարդապետները մինչև  
այսօր էլ ամեն կերպ աշխատում են իրանց  
աշխարհաբարը որքան կարելի է շատ շաղախել:

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՅԻՆԱՍԱԿ ԳԵՐԵՋՄԱՆՆԵՐ  
(Ֆիլիպպ Բէրգէսի)

«Քանի հատ են»:—«Քանի վեց»:—«Եղովը  
ստանալին. միայն քսան գերեզման է պատ-  
րաստ»:—«Այնքան պէտք է վեց հատ էլ փորել»:—  
«Ե՛ք կարելի արդեօք մի քանիսին միտեղ  
թաղել: Հօ չեն կուտուր գետին տակին»:—«Կա-  
տակներդ լիցի, հալուր, և շուտ սկսիլ փորել:  
Տեսնում ես, մտնում են արդէն: Լավեց ճեղք-  
վող ալիքների ճղիւնը, խուլ աղմուկ, քրքիւլ—  
և կրկին լռեց ամեն ինչ:  
Անձրեակայն, մռայլ օր է. դեղնա-կապարա-  
գոյն մառախուղը անթափանցելի մշուշով պա-  
տել է ծով ու ցամաք, սպիտակ վիթխարի ու-  
րուականներն տեսք տալով ափի մօտով անցող  
չոգենաւերին. նրանց աղաղաբար սուրցները հնը-  
նում են սկզբում խուլ և անորոշ, յետոյ, մօտե-  
նալով, աւելի ու աւելի բարձր ու զիլ, այնու-  
հետև հեղեղեղ հորեց մեղմանում են, մինչև որ  
վերջապէս բոլորովին լռում են խորհրդաւոր հե-  
ռաւորութեան մէջ:  
Մով արեւներն իրակերպ աղմուկն է միայն,  
որ չէ լռում ոչ մի րոպէ. նրանք մերթ վայրագ

գրաբարի մէջ, բայց ինչ օգուտ են ստանում  
գրաբարից:—Միայն այն, որ մի ծանր, արտա-  
յայտութիւնից, ճիւղնութիւնից զուրկ լեզու ու-  
նեն, որ շատ շատերի համար անհասկանալի է  
դարձնում նրանց գրուածքները: Բնական էր,  
որ վենետիկցիները այժմ էլ ախ ու վաշով յի-  
շն իրանց նախկին տիրապետութեան փառա-  
ւոր օրերը, երբ իրանք միակ էին, երբ ամբողջ  
ազգը պիտի գնար նրանց ետևից: Այժմ ուրիշ  
ժամանակներ են, այժմ Վենետիկը ինքը պիտի  
գնայ ազգի ետևից, եթէ չէ ուղղւած մոռացու-  
թեան, անյայտութեան մատնելի: Եւ այս կեր-  
պարանափոխութիւն. կատարողը աշխարհաբար  
լեզուն էր, գոհնիկը, որ ամենքին տուել է աշ-  
խարհաբար և գրականութիւն պահպանելու կարող-  
ութիւնը: Ահա հէնց այդ պատճառով է, որ «Բար-  
մալէպի» վերջին համարում մի խիստ, բայց,  
ի հարկէ, անփաստ յարձակում է կատարվում աշ-  
խարհաբարի դէմ: Պատասխանելով պ. Զօպա-  
նեանի մի յօդուածին, ամսագիրը ասում է.

Վենետիկի Միթիթարեանները այս իրենց  
սկիզբէն միշտ ջերմ պաշտպան գտնուեցան  
նախնեաց գրական լեզուի ծաւալման և ընդ-  
հանրացման, բայց ընդդիմութիւնը և ժողովր-  
դական մամուլը ծաւալումը խոչընդոտեց նախ-  
դիսացաւ նոյն գրականութիւնը ուղղութեան:

Եթէ «Երնդիմութիւնը» և «Ժողովրդական  
մամուլը» անորոշ բառերի տեղ դրած լինէր  
մի բառ—ժամանակը—աւելի պարզ և հասկա-  
նալի կը լինէր Միթիթարեանների փառաւոր ա-  
նաջողութեան բուն պատճառը: Այո, ժամանա-  
կը ձեռք յաղկեց, ժամանակը իր անողորմ պա-  
նաշնորհով ծնեց ձեռք դուռ, բայց դուռ նրան  
չը հասկացաւ, և ուրիշ ձեռք բոլոր ջանքերով  
ոչինչ չէր կարող անել այնուհետև: Դուք մինչև  
այժմ էլ այն մոլորութեան մէջ էք, թէ ժամա-  
նակը չէր ձեռնից պահանջողութիւն անողը, այլ  
ինչ որ «Երնդիմութիւնը»:

Եթէ մեր նախնի միաբանները հետեւէին  
աւանդ ու խորտ ու բորտ լեզուի պաշտպան-  
ներուն—ասում է «Բարձրակէպը»—այսօր և նոյն  
իսկ յապագային իրենց հեղինակութիւնը  
պիտի չունենային բարձրաստիճան պատկա-  
ռելի արժանաւորութիւն մը:

Ահա մոլորութիւն: Կարծէ՛ք, եթէ Զամբանի  
պատմութիւնը կամ Տ. Ալիշանի «Սիւսումը»,  
«Արարատը» պատմական լեզու արժանաւորութիւն-  
ներ ունեն, պատճառն այն է, որ դրանք գրա-  
բար լեզուով են գրված: Ո՛չ, հազար անգամ  
ոչ: Մի գործի արժանաւորութիւնը նախ և ա-  
ռաջ այն է, որ նա մատչելի է դառնում ըն-  
թերցողներին մեծ բազմութեան, ժողովրդակա-  
նանում է: Հ. Ալիշանի տեղագրական ստուար

գործերը անշուշտ ընթերցողների աւելի լայն  
ու մեծ շրջան կը գտնէին, եթէ գրված լինէին  
աշխարհաբար լեզուով: Մենք չենք ասում թէ  
այդ գործերը նշանակված պիտի լինէին հասա-  
րակ ժողովրդի համար: Ո՛չ, նոյն իսկ կրթված,  
ինտելիգենտ դասակարգը չէ կարողանում մո-  
տենալ «Արարատին», «Սիւսումին», «Սիւսակա-  
նին», որովհետև չէ կարող նրանցից մի բան  
հասկանալ:

Եթէ զօրօրինակ, Բագրատունին իւր դա-  
սական ոտանաւոր թարգմանութիւնները և  
իւր գլուխ գործող «Հայկ Իրացադը» ժամա-  
նակի աշխարհիկ լեզուով գրէր, արդեօք ըն-  
թերցողը հոն պիտի գտնէին լեզուի ու բա-  
ռերու թանկագին գանձարան մը, անողորմա-  
կան գրութեան ոճ մը, ուժգին և վառ շեշ-  
տաւորութիւն մը:

Պատասխանում ենք: Եթէ Բագրատունին,  
նրա ընկերները, նրա նախորդները իրանց տա-  
ղանդը, ընդունակութիւնները գործ դնէին աշխար-  
հաբար լեզուն մշակելու, կանօնաւորելու, հարս-  
տացնելու համար, նրանք կատարած կը լինէին  
մեծ գործ, աւելի գեղեցիկ ծառայութիւն արած  
կը լինէին ժողովրդին: Եւ եթէ «Հայկ Իրացադ-  
ը» երևան գար իբրև աշխարհաբարի մի կոթող,  
իբրև կենդանի լեզուի մշակված հարստութիւն-  
ների մի գանձարան, իբրև աշխարհաբար բանա-  
ստեղծութեան մի ողորկ, ճկուն ու կենսունակ  
գործիք, այն ժամանակ մենք շատ առաջ գնա-  
ցած կը լինէինք մեր զարգացման մէջ և «Հայկ  
Իրացադը» հիմա էլ հայ ընթերցողի գրասեղանի  
վրա կը լինէր: Վերցրէ՛ք «Հայկ Իրացադը» ոչ  
իբրև լեզուական հարստութեան շտեմարան, այլ  
իբրև գրական արտադրութիւն և ասացէ՛ք. իբրև  
գիրք, իբրև բանաստեղծական ստեղծագործու-  
թիւն ինչ օգուտ է տուել նա ազգին և քանի  
հոգի են կարգացել ու հասկացել նրան: Դրէ՛ք Հ.  
Բագրատունուն այդ ստուար գործի մօտ մի փոքրիկ  
բանաստեղծութիւն, օրինակ, մի «Մար Արաբի»:  
Եւ ինչ կը տեսնէք: Մինչդեռ վերջինս իր «առա-  
քիլ» ու խորտաբորտ լեզուով մտել է գիւղական  
նր խրճիթը, հարուստ, ճոխ «Հայկ Իրացադը»  
գրադարանների և գրավաճառանոցների փոշի-  
ներն է վայելում: Այդուհետև գաղտնիքը պարզ  
է, չէ: Բայց «Բարձրակէպը» փոխանակ այսպի-  
սի օրինակի դիմելու, օրօրում է իրան այն ա-  
ռասպելով, թէ՛

Շատ տեղ հայ գեղջուկը ու դեռուրդ աւելի  
գրաբար կը հասկնայ, բան թէ բարեկու-  
նեան (I) աշխարհաբարը:

Ահա ինչ է նշանակում վաշ, ինչ է նշա-  
նակում յամառ հնապաշտութիւն և անդիտու-  
թիւն աշխարհային գործերի, իրականութեան

բաղմի և մահաւան մասին, երգի և պարի մա-  
սին, վայրենի ու ազատ կեանքի մասին... Իսկ  
այժմ ամայի է կղզին:

Ամայի:  
Սակայն նրա ընդարձակ դաշտերում, անտեղ,  
ձախ կողմում, գետեղված են վաթսուհի հազար  
հոգի: Կատարի մերկիները անեղագոյ ոռոտում են  
նրանց վրա աշնանային մռայլ գիւշերները: Թեթև  
գեփուռները գուրգուրում են նրանց գարնան,  
և այն ժամանակ մեղմ սուսաւում են տերև ու  
խոտ, իսկ ծառերի խիտ սաղարթում ուրախ  
ու տատարակները, և անտառի թաւուտից հեռու-  
հեռու տարածվում են դէպի չրջակայքը մշահա-  
ւի սուղոցը և վայրի աղանդների մնչիւնը: Բայց  
այդ վաթսուհի հազար հոգին խոր քնած են, և  
ոչ ոք նրանցից չէ լսում ոչ աշնանային բուրբ  
մոնչիւնը, ոչ գարնանային բնութեան տարփա-  
ւոր և աղմկալից զարթումը.—մեռելներ են դը-  
քանք, որոնք հանգստանում են յաւիտենական  
քնով... Այլ կողմում երևում է չէյրների ամբո-  
ցած մի խումբ—բանտը և ապուշների ապաս-  
տարանները:

«Հարաւ-Իսլանդ» կղզին գտնվում է Լոնդ-  
ոնից հեռու Իսլանդիայի մօտ, Նիւ-Յորկի մօտ: Նա  
աւելի յայտնի է ուրիշ անունով, այն է՝ «City-  
Cemetery», այսինքն քաղաքային գերեզմանա-  
տուն—անունը, անտէր աղբատների համար:  
Ժողովրդը պարզապէս Potters-field է անուա-  
նում նրան:

վերաբերմամբ: Եթէ այդպէս է, ինչու «Բարձրա-  
կէպը» գրաբար լեզուով չէք հրատարակում, որ-  
պէս զի հասկանալի լինէր դոնէ այդ շատ տե-  
ղերէն գեղջուկներին: Թէ գեղջուկը արժանի չէ,  
որ նրա համար հասկանալի բաներ գրվեն, ձի-  
ղը սա է: Եթէ ճիշդ չը լինէր, մինչև այժմ թէ՛  
վենետիկցիները և թէ ուրիշ տեղերի գրագէտնե-  
րը կը հասկանային, որ գեղջուկի ուղածը Նա-  
րեկներ, «Հայկ Իրացադ»-ը չեն, այլ պարզ,  
շատ պարզ աշխարհաբար գրուածքներ:

Քանի որ խօսքը գրաբարի և աշխարհաբարի  
վրա է, ինչեք մի հանգամանք էլ: Յայտնի է,  
որ արևմտեան հայերը, շատ սակաւ բացառու-  
թեամբ, իրանց լեզուի հարստութիւնը քաղում  
են ոչ թէ ժողովրդի կենդանի բարբառից, այլ  
գրաբարից. և հէնց այդ պատճառով է, որ ար-  
ևմտեան աշխարհաբար խոշոր քայլերով դի-  
մում է դէպի գրաբարը, դառնում է հետզհետէ  
մոլթ, անհասկանալի, ճոռածաբան, արտադրում  
է Նարեկի պերճութիւնները, բառակցուրներ, ո-  
րոնց մէջ կորչում է միտքը: Մենք մի օրինակ  
կը բերենք «Անասիտ» ամսագրի վերջին համա-  
րում տպած մի յօդուածից, որի վերնագիրն է  
«Ամբոխը»:

Անդիտակից է ան, ու կը խորտայ ծովին  
համեմատ որ դանկ կը ցնցէ: Ու հովին համե-  
մատ, անոր դէմքը, ինքնին առանձնական ու  
անգոյն, արտայայտութիւն ու իմաստ կը  
ստանայ: Երբ գեղեցիկութեան հորիզոնէ մը  
հասնի շունչը կենդանի բնութաւոր, և անոր  
մկանուններուն մէջ ու մինչև նոյնըներուն  
խոր թափանց, Ամբոխը նուիրական վեր-  
ջովմունքը կունենայ լանջի մը որ սիրով կե-  
լեկցէ, անոր կոհակները կուտենան ինչպէս  
սրբապիւր որ պիտի ծննդաբերէ, և անոր ա-  
լեմփանքը ստեղծագործութեան երգեր կը  
հնչեցնէ:

Գնահատում ենք հարուստ նկարագրութիւ-  
նը. բայց թէ այդ նկարագրութիւնը բաց ու  
պարզ չէ, չէ կարող ընթերցողի սրտին ու ըմ-  
բուռնողութեան մօտենալ, այն ժամանակ նա բա-  
ռերի ու նախապատութիւնների մի անկարգ  
բառն է... Պարզութիւն, պարունակ, ամենից ա-  
ռաջ պարզութիւն:

## ՆԱՄԱԿ ԷԶՄԻՆՆԻՑ

Օգոստոսի 3-ին

Յայտնի «Մարց» կալուածքի պատմութիւնը  
մի ամսից աւելի է, որ տարածվել է տեղումս,  
սակայն մինչև այսօր հրապարակ չէինք հանում,  
որովհետև, հաստատ աղբիւրներից տեղեկու-

Այդտեղ Նիւ-Յորկը թաղում է ամեն տարի  
մինչև 4,000 մարդ: Դրանց գլխաւոր մասը կազ-  
մում են անտուն պրօլետարիներ, իսկ մնացածը՝  
չբաւորութեան ու թշուառութեան պատահական  
զոհեր, որոնց ուղարկում են այստեղ մեռելանո-  
ցից, հազարաւոր անհետ կորած գաղթականնե-  
րի այդ վերջին կայանից: Այդ գաղթականնե-  
րի թիւում գտնվում են բոլոր ազգերի ու կրօն-  
ների ներկայացուցիչներ, բացի չինացիներից, ո-  
րոնք իրանց բոլոր մեռելներին ուղարկում են  
Զինաստան՝ այնտեղ հայրենի հողում և հայրենի  
սովորյալների համաձայն թաղելու համար:

Երգեմար հասաւ ափին, ուր տեղի ունէր վե-  
րջիշաղ խօսակցութիւնը: Քանից փայտէ  
դադաղներ դարձված էին իրար գլխի տախտա-  
կամանի վրա: Այդ դադաղները արձնէ, պաշ-  
տօնական հաչի համաձայն, 40 սէնտ ամեն  
մէկը.—այդքան է միայն տալիս քաղաքը այդ  
թշուառներին, որոնք մեռել են անտէր աղբա-  
տութեան մէջ կամ պանդխտութեան մէջ՝ հեռու  
անտեղնակ հարազատներից ու մտերիներից:  
Աստիճանաւորը հաչեց դադաղներն ու կաճով  
նշանակեց համարները. մշակները մի քանի  
խօսք ասեցին իրար, իի հայնայանքներով ու նը-  
րովներով: Տախտակամանից դուրսվար տախ-  
տակ դրեցին դէպի ափը և նրա վրայով միանա-  
լից քայլերով ինքներն բոլոր դադաղները: Լավից խուլ  
զրդիւն և մինչոյն ժամանակ մի վայրենի, խե-  
ղաւ ըրբիւլ—ապաստարաններից մէկի ապուշ-  
ներն էին այդ ուրախանում, տեսնելով դադաղ-

Թիւններ ժողովելով պ. Վարչաձեռնի՝ այդ կա-  
լուածքի վրա կառավարել նշանակվելու ման-  
րամասն պատմութեան մասին, մենք փնտռում  
էինք նոյնպիսի աղբիւրներ և նախկին կառա-  
վարի պ. Տէր-Գաւթեանի երկարամեայ գործու-  
նէութեան մասին, որ մինչև այժմ էլ գաղտնի  
է, թէև, որպէս անբարեխիղճ կառավարիչ նրան  
անհարկողներն դէմ, լսելով է նաև հակառակը՝  
թէ նա պահպանում էր վանքի շահերը և ար-  
գելք էր դառնում միւս աշխարհական կալուա-  
ծատէրերին յափշտակելու և իւրացնելու կա-  
լուածքի լաւ պատահները Այս վերջին կար-  
ծիքը մեզ աւելի հաւանական է թուում, զիսա-  
ւորապէս ի նկատի ունենալով հետեւեալ դէպքը,  
որ տգեղ երևոյթն էր մէջ, որպէս յիշա-  
տակված էր «Մշակի» 189-դ համարում, ամե-  
նագիւղացիներն պէտք է համարէր:

Վանքապատկան Մ ար. կալուածքի նախ-  
կին կառավարիչ պ. Տէր-Գաւթեանի տեղ մի  
այլ կառավարիչ նշանակելու հարցը ծագել է  
զիսաւորապէս Վաթիկանի թիֆլիսեցի ժա-  
մանակ, սակայն ոչ դեռ չէ աշխուժել ընտրվել,  
որովհետև առաջարկված թեկնածուներից որը  
հաղթական է լինում աշխարհական կալուածատէ-  
րերից մէկն ու մէկին, որն էլ ինքն է մերժում,  
ի նկատի ունենալով կալուածքի զաւթաղար և  
անորոշ վիճակը: Չէ համաձայնում Վեհափառի  
առաջարկութեամբ յիշեալ կալուածքի կառավա-  
րիչ լինել և Ալեքսանդրոպոլի քաղաքապետի պ.  
Տէր-Պետրոսեանից, ուղղակի առարկելով, որ  
վանքի այժմեան վարչական պայմաններում ան-  
կարելի է պաշտօն ստանձնել և գործ կատարել  
քանի որ մէկի արածը մի ուրիշը հնչողութեամբ  
որոշեցնում է, կամ մէկի ընտրածը՝ մի ուրիշը  
հնչողութեամբ հեռացնում:

Ի միջի այլոց պ. Տէր-Պետրոսեանի խորհուրդ  
է տալիս Վեհափառին վանքապատկան բոլոր  
կալուածքները օրինաւոր հսկելու և վանքի շա-  
հերը պաշտպանելու և ընդարձակելու նպատա-  
կով բանիմաց աշխարհականներից կաղմել մի  
մասնաժողով, որը, նախազանութեամբ մի հոգե-  
ւորականի, պարտաւորվի հսկել կալուածքների  
ու կառավարիչների վրա և ընդել նրանց գոր-  
ծունէութիւնն ու հաշիւները: Վեհափառը թէև  
հաւանութիւն է տալիս պ. Տէր-Պետրոսեանից  
կարծիքներին, սակայն այդ հարցի առիթով  
կրկին անգամ չէ խօսում պ. Տէր-Պետրոսեանից  
հետ:

Ահա այս պատճառաբանութիւններից բաւա-  
կան ժամանակ անցնելուց յետոյ տարածվում է,  
որ Մ ար. կալուածքի կառավարիչ պ. Տէր-  
Գաւթեանի տեղ նշանակված է պ. Վարչաձեռն,  
որ վերջինիս միջոցով, այն էլ առանց մայր-  
աթոռի ներկայացուցչի, կալուածքը բաժանվել  
է ի մաս վանքի շահերի և յօգուտ միւս աշ-  
խարհական կալուածատէրերի և որ այս կար-  
գադրութիւնը եղել է Վեհափառի կոնդակով, ու-  
րին համաձայնվել են և մինչդէռ անդամները: Թէ  
որքան իրաւացի է այս փոփոխութիւնը և փո-  
փոխութեան պատճառաբանութիւնները, մենք  
թողնում ենք մի այլ յարժար ժամանակի մաս-  
նաւոր նկարագրելու. առ այժմ այնքան մի-  
այն կասնք, որ Վեհափառի շրջապատողներից

ներքո: Մշակները քառ նետեցին նրանց կողմը,  
սարսափելի հրէքներ խուճր գրվեց վաղէվազ  
և նորից ամեն ինչ հանդարտվեց:

Դադարները կոյտ-կոյտ բարձեցին սայլերի  
վրա և յուզարկալուծմբ ուղղվեց դէպի գերեզ-  
մանատեղը, հետեւելով աստիճանաւորին: Թաղ-  
ման ծէսը բարդ չէր. դադարը շտապով հրում,  
զցում էին գերեզմանի մէջ, յետոյ միացեալ ոչ-  
ժերով լցնում էին փոքր հողով, և իսկոյն համա-  
պատասխան համարը կրող փայտէ ձողը դար-  
դարում էր թարմ հողաթմբը:—այդպէս, անց-  
նելով մէկ գերեզմանից միւսը, լցեցին բոլոր  
քան վեց փոսերը:

Մուսայի է այդ գերեզմանատունը և տխրաբեր,  
ինչպէս երկնքը աշնան: Այդ «հանգստարան»  
չէ, ուր հարազատներն ու ժողովները վշտա-  
հար հողով և խորտակված սրտով յուզարկաւո-  
րում են իրանց սիրելիների թանկագին նշխար-  
ները:—այդ՝ պարզապէս խաժամուժ ամբոխի  
դիակները թափելու տեղ է համաշխարհային  
քաղաքի համար, ուր ոճրագործ ճակատագիրը՝  
իր ժողովի չքաւորութեան հետ՝ կոպիտ ծագողով  
կուտակում է իր դոնորը, որպէս զի անյայտ  
գերեզմանների բաժինը դարձնի նրանց...

Վաթիկանի հաղաբ գերեզման—և ոչ մի նշան  
համակրութեան կամ սուգի, ոչ պակաս, ոչ տա-  
պանաբար, ոչ նոյն իսկ անուշ,—համարակիւր  
մի փայտ և ոչինչ աւելի: Եթէ հանդուգեալի ա-  
նունը յայտնի է, նա գրվում է համապատաս-  
խան համարով թաղման մատենաներում, իսկ  
եթէ ոչ, բաւականանում են միայն համարով:

և վեհափառի չէժըը մաշողներից մի երկուսը,  
ինչպէս ասում են, օգտվելով այն հանգամանք-  
ներից, որ Վեհափառը, հաւատ ընծայելով իրան  
չըջապատողներին, կօնդակների սեպգրութիւնը  
կազմելուց կամ կարգաւորել յետոյ, նրանց մա-  
քուրը ստորագրում է առանց կարգաւոր, իս ար-  
դա իս ու մ են Վ և հ ա փ ա ռ ի կ օ ն դ ա կ է,  
մի կողմը թողնելով իսկական միտքը և մրտը-  
նելով նրա մէջ իրանց ցանկացածը... Հետեւեալը  
լինում է այն, որ պ. Տէր-Գաւթեանի տեղ  
նշանակվում է պ. Վարչաձեռն և կալուածքի բա-  
ժանութեան մէջ վանքը վնասվում է 30—40,000  
րուբլի... Եւ այս բոլորը, իբրեւ թէ, Վաթիկանի  
որոշմամբ և մինչդէռ անդամների համաձայնու-  
թեամբ, մինչդէռ ոչ Վաթիկանին է՝ այդպէս  
ցանկացել և ոչ էլ սինդիկ անդամները այդ մա-  
սին խօսակցութիւն են ունեցել Վեհափառի  
հետ:

Մենք քաջ գիտենք, որ բիրաւոր տգեղ  
ե ր և ո յ թ ն ե ր ի հետ այս ևս կը մնայ «ճայն  
բարբառայ...» և տգեղ ե ր և ո յ թ ն ե ր ի  
քաջարի հեղինակները, որպէս միշտ, այս ան-  
գամ էլ անպատիւ լի մնան, կամ, որ աւելի  
հաւանական է, դուրէ վարձարարին և աւելի  
բարձր պաշտօններ արժանանան, սակայն մենք  
մեր պարտականութիւնն ենք միայն կատա-  
րում՝ հրապարակ հանելով այն, ինչ որ կատա-  
րում է ծածուկ:

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Օգոստոսի 4-ին

Այս օրերս Կարսում պատահեց մի քստմնելի  
եղանակագործութիւն: Եւրաթի երկնայնք, ժամը  
8<sup>1</sup>/<sub>2</sub>-ին, ընկ կարսեցի 24 ամեայ Կեղեղ Միրզա-  
յանի իր վաճառատունը փակելով՝ դնում է տուն:  
Ճանապարհին կրակակնիքից մի 20 քայլ հեռու,  
խոտավաճառների կարգում, դաշնի հինգ հա-  
րուածով սպանեցին նրան անյայտ չարագործ-  
ները: Ոստիկանութիւնը վրա հասնելով, գտնում  
է միայն Միրզայանի անշնչացած դիակը:

Անմեղ զոհի եղբայրը և աղքատները իսկոյն  
կատկած յայտնեցին և մեղադրեցին այդ սպան-  
ման մէջ վաղաքահարկուցի Յովհաննէս Բէրբե-  
րեանին: Դատաւարական քննիչը իսկոյն բըռ-  
նեց Բէրբերեանին և մի ուրիշ լեզգիին, որին  
սպանութեան միջոցին հասարակաց տանից  
դուրս էին արել կտիւ անելու պատճառով, բայց  
հետեւեալ օրը երկուսին էլ արձակեց, ոչ մի  
փաստ չը գտնելով նրանց յանցագործութեան հա-  
մար: Անյայտ չարագործներից մէկը հասարա-  
կութեան միաբերան ցաւակցութիւնից թէ ա-  
նէժեղից խղճահարկած՝ մի քանի մարդկանց ներ-  
կայութեամբ ասում է. «Եթէ մի մարդ միւսին  
200 րուբլի տայ, թէ զինս այս ինչ մարդուն  
սպանէ, այդ սպանութեան մեղքը ում վրա կը  
ծանրանայ—փող տուողի՝ թէ սպանողի վրա:  
Նրանք էլ ասում են.—«Երկուսն էլ հաւասար  
յանցատու են:—«Ոչ, պատասխանում է խղճա-  
հարուածը, իմ կարծիքով փող տուողը աւելի  
յանցատու է: Այդ լուրը մինչև ոստիկանու-  
թեան հասնելը, նա փախելով է Կաղզուան, ուր  
բռնվելով բերվում է Կարս և խոտով անվում է,

այդպիսի հանգուցեալները պատկանում են «ան-  
հետ կորածներին» դառնալ—Այն աւելի հնչու է  
տեղեկութիւն ստանալ՝ Աթրիկայի խորքում, այդ  
«վայրենի, անյայտ երկրում», ընկնելի ձեռքով  
յօշուած մի ճանապարհորդի մասին, քան մի  
թշուառ պանդուխտի մասին, որ անբարեխիղճ  
հանդգնածներին բերմամբ ընկել է Potters-  
field-ի ձրի գերեզմաններից մէկը, ուր յաւի-  
տեան թաղում են հանգուցեալի ոչ միայն մար-  
մինը, այլ և անունն ու յիշատակը: Potters-  
field ընկնելուց յետոյ մարդուց ոչինչ չէ մնում՝  
բացի մի համար:

Ո՛վքեր էին այդ քսանվեց մեռելները, որոնց  
Հարութ-Խոյանը էր գցել ճակատագիրը այդ առաջ  
առաւօտ: Պատասխանը շատ պարզ է,—№ 513—  
518—539, չափը 65:

Տեսնեմք այժմ, ինչ է գրված թաղման գրե-  
քերում համապատասխան համարների առաջ և  
ինչ կարող են աւելցնել դրա վրա ծառայող-  
ները իրանց յիշողութիւններով:

Այդ թշուառներից քսանը, ինչպէս առհասա-  
րակ այստեղ թաղվածների մեծամասնութիւնը,  
պատկանում է քաղաքային պրոլետարիատին:  
Նրանց անունները, մի քանի բացառութիւննե-  
րով, նշանակված են ժողովրդական, կան նոյնպէս  
մի քանի կարճ տեղեկութիւններ, որոնցով կա-  
րելի է ժողովրդապէս որոշել, թէ ինչն է ար-  
դեօք նրանց հասցրել այդ տխուր վախճանին—  
ձրի թաղման: Ահա փախելով է Կաղզուան, ուր  
բռնվելով բերվում է իր հիւանդ մարդուն և յետոյ  
թաղել նրան վայելուչ կերպով: Ճակատագիրը

թէ «թափաղակեցի (վաղաքահարկուցի) Յովհան-  
նէս Բէրբերեանը մեզ տուեց 200 րուբլի, որ  
սպանեմք Միրզայանի Գեղեղին. սպանողներս  
չորս հոգի էինք. երկուսն թեւեւ բռնեցինք,  
երկուսն էլ դաշնով սպանեցինք: Ընկնելներիցս  
մէկը փախաւ դեպ թիֆլիս, միւսը դեպ իրանց  
գիւղը—Վանի-գիւղ, երրորդն էլ փախաւ Ալաշ-  
կերտ: Թիֆլիս փախողին բռնել են ու գրել  
բանտը. նոյնպէս բանտարկված է Բէրբերեանը:

Սպանութեան պատճառը, որ քաջ յայտնի է  
ոչ միայն այս տղերքը գրողին, այլ գրեթէ ամ-  
բողջ Կարսին, հետեւեալն է: Բէրբերեանը գալով  
«Թիւրքիայի» ծանօթանում է իր զոհի հետ սրա-  
նից հինգ տարի առաջ: Թէև թերուս, բայց  
չփված լինելով Հայաստանի քաղաքներում դա-  
նազան չըջանելի հետ, շատ լաւ էր վարժվել  
մարդ գրաւելու և իրան բարձր պահելու արհեստի  
մէջ: Նա իր հանգուցեալ կնոջ հօր օգնութեամբ, որ  
բողջական հայերի քարոզիչ է, ամերիկական մի-  
սիօներական ընկերութիւնից ստանում է տարե-  
կան 300 րուբլի նպաստ իր որդոց դաս-  
տիարակութեան համար: Նրա որդիքը Վաղար-  
շապետն է, հետեւեալն է: Բէրբերեանը էին  
չակերտում կրտսերին, քաղաքում թափառում էին  
փողոցները, իսկ ինքը Կարսում ապրում էր որ-  
պէս էֆէնդի: Նա իր ճարպիկութեամբ այնպէս  
էր գրաւել հանգուցեալ Միրզայանին, որ նրա  
դուրը միշտ բաց էր նրա առաջ՝ իբրեւ ազնիւ  
անձնուէր ընկերի առաջ:

Անցեալ 1898 թուին Միրզայանը իր ամուս-  
նու հետ Թիֆլիս գնալով առևտրի համար, իր  
տունը, ուր մնում էր իր 45 տարեկան այրի զո-  
քանից և վաճառատունը, անպայման հաւատաց  
այդ անձնուէր, ազնիւ ընկերին: Նա պարզաժա-  
նակուցեալով մի ամբողջ բացակայութիւնից օգո-  
վելով՝ գրաւեց նրա զգրանչի սիրտը, որ արդէն  
յղի էր, և սեփականացրեց վաճառքից գոյա-  
ցած 585 րուբլին: Միրզայանը հիասթափվեց  
այդ էֆէնդու ճարպիկութիւնից, որից վրէժ առ-  
նելու համար ծեծեց նրան հրապարակով, որի  
համար և դատաւարական 20 օր բանտարկու-  
թեան Բէրբերեանը պատկվեց 45 ամեայ այրու  
հետ, ինքը հաղիւ 32—35 տարեկան լինելով:  
Նա փաստաբանի միջոցով դատ բացեց. Միր-  
զայանից սպանվում էր 11,000 րուբլի, նրա  
զգրանչի՝ իր կնոյ ժառանգութիւնը, որ իբրեւ  
թէ մնացել էր Միրզայանի մօտ. իսկ Միրզա-  
յանը դատարանով պահանջում էր նրանից այն  
585 րուբլին, որ իւրացրել էր Բէրբերեանը նրա  
վաճառված ապրանքներից: Այսպէս իրարու  
վրա չարաչար գնահատանք էին տալիս գրեթէ  
մի ամբողջ տարի: Դեռ բողոքները չը վերացած՝  
արհիւնուշտ վերժառութիւնը վերջ տուեց Միր-  
զայանի ջանքի կենսին:

Բ. Տէր-Գրիգորեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ ահա մօտ 10—15 օր է,  
ինչ Բաթումի թիւրքաց հիւպատոսը այլ ևս ոչ մի  
անցագիր չէ ստորագրում դէպի հայրենիք յետ  
վերադարձող հայ գաղթականների համար: Չէ  
թող տրվում Թիւրքիա անցնելու նոյնպէս և այն  
վաճառականներին, որոնք վաճառականական

ղացաւ իրան նոյն իսկ այդ բանը: Հիւանդա-  
նալով, նա ծախսեց իր բոլոր չնչին խնայողու-  
թիւնները, մտաւ հիւանդանոց և այնտեղ մե-  
ռաւ անտրեակաւ: Ահա և մի ուրիշը, № 519:  
Մի վահէլ աղիկ, 18 տարեկան: Անունը Անի  
է. կատարեալ օրը է նա, անտէր ու անտոն:  
Մայրը վաղուց է մեռել, հօր երես նա երեք-  
չէ տեսել: Խեղճ հիւանդանոցում է մեռել:  
Նրա անունը գիտեն ամենքը, որոնք յաճախում  
են City-ն, ուր նա լրագրներ էր ծախում փո-  
ղոցաբաժաններում,—այդ նրա արհեստն էր  
վաղ մանկութիւնից ի վեր: Այդ օր չը կար,  
հոգաբ նրա մասին կենդանութեան ժամանակ,  
ևս աւելի մահից յետոյ,—և նրան ուղարկեցին  
Potters-field:

Մանր է դիտել այն ճանապարհը, որով ու-  
նեւոր դասին պատկանող մարդիկ յաճախ ընկ-  
նում են աղքատութեան և կորուստի վիճի: Ար-  
բեցութիւնն ու նարկոզն են գլխաւոր դեր խա-  
ղում այդ դէպքերից մեծ մասի մէջ: Այդ քսան-  
վեց հոգու մէջ կայ մէկը, որ երկար ժամանակ  
ամենալաւ բժշկի համբան ունէր արևմտեան  
Նիւ-Եօրքիում: Բայց նա ընկաւ ժողովի ճիւղա-  
ները, և այդ դեր դարձաւ նրա կորուստի պատ-  
ճառը: Ինչպէս լինում է առհասարակ այդպիսի  
դէպքերում, նա սկսեց նարկոզը, սովորական  
չափով (30—40) կաթիլ Laudanum ընդունելով  
անընդմեջ գէլ. նարկոզը թոյլ էր ներգոր-  
ծում,—նա աւելացրեց չափը և, այդպիսով  
ջղերը քայքայելուց յետոյ, չէր կարողա-  
նում այլ ևս զսպել իրան, թէև իբրեւ բը-

գործելով կապված են և յարաբերութիւն ու-  
նեն Թիւրքիայի հետ: Ինչպէս լսեցինք, վերջին-  
ներին համար հիւպատոսը հեռագրով հարց է  
տուել Կ. Պոլսի, թէ մի գուցէ թիւրքապետութիւն  
կայ այդպիսի մի խիստ կարգադրութիւն անե-  
լով նաև վաճառականների երթևեկութիւնը դա-  
դարեցնելու վերաբերութեամբ, բայց, փոխա-  
նակ իր հարցի պատասխանին, ամեն օր գրեթէ  
նորանոր և աւելի խիստ հրամաններ է ստա-  
նում նոյն ուղղութեամբ: Բաթումի արտասահ-  
մանեան բուր շոգնաւային ընկերութիւնների  
ազնեաները ևս Թիւրքիայի իրանց գրասենեակնե-  
րից հեռագրիւր են ստացել, որ Թիւրքիա գնա-  
ցող ոչ մի հայ չընդունեն իրանց շոգնաւային  
վրա, որովհետև թիւրքաց կառավարութիւնը  
խստիւ արգելում է նրանց մուտքը Թիւր-  
քիա:

Մեր խմբագրութեան ուղարկված է Հնդկաս-  
տանից անգլիական լեզուով մի բրոշյուր «A brief  
historical sketch of the Armenian Church» վեր-  
նագրով, որ պարունակում է իր մէջ համառօտ  
տեղեկութիւններ հայ-լուսաւորական եկեղեցու  
մասին: Բրոշյուրը տպված է Կալկաթ քաղա-  
քում և բաղկացած է մեծադիր 32 երեսներից:  
Հեղինակն է Կալկաթայի բանասէր Տէր Պաակ  
Յակովբյանեանց:

Թիֆլիսի քաղաքային ուսարկան, նոր փոր-  
ձերի հիման վրա, որոշեց ոչխարի մի զինը նը-  
շանակել ֆունտը 8<sup>1</sup>/<sub>2</sub> կոպէկ, իսկ տաւարի մի  
զինը կը մնայ, ինչպէս առաջ՝ 7 կոպէկ ֆունտը:

Ստացանք Թիֆլիսի հայոց Հրատարակչական  
ընկերութեան լոյս ընծայած «Մանչուկն ու Վու-  
տիկը» գրքից, հեղինակութիւն Կիւրիւմբեկյան,  
որ թարգմանել է Պ. Պաօշեանց: Գրքից կը բաղ-  
կացած է 44 մեծադիր երեսներից, տպագրված  
է խոշոր տառերով ամսուկների ընթերցանու-  
թեան համար: Գինն է 20 կոպէկ:

Մայրաքաղաքի լրագրիւրներ ասելով, ներկա-  
յում տպագրութեան է յանձնված մի շատ հե-  
տաքերի գրուածք վրացերէն լեզուով, որ վերա-  
բերում է Վրաստանի պատմութեան: Գիրքը  
բաղկացած կը լինի մի հատորից և կը կրէ հե-  
տեւեալ վերնագիրը. «Սիրայոս ճանապարհ-  
հորդների և միսիօներների տեղեկութիւնները  
Վրաստանի մասին, վրաց Վախտանգ թագա-  
ւորի գրադրութիւնը ֆրանսիական Լուզովիկոս  
թագաւորի հետ, Իրակոյ թագաւորի գրադրու-  
թիւնը Հնդկաստանի անգլիական ներկայացու-  
ցիչ և Մադրասայի վաճառական, հայ կրեստ  
Յակոբ Շարիմանեանի հետ»:

ՂՈՒԲԱՅԻՑ մեղ գրում են. «Բաղդուի նա-  
հանգական դատարանի բաժինը ներկայ օ-  
գոստոսի 5-ին ըննութեան ենթարկեց Հու-  
սարի բնակիչ Սեօր Սուխորուկովի գործը,  
որը մեղադրվում էր իր խորթ աղջկան (կնոյ աղջ-  
կան) կուտութիւնից զրկելու համար, և դադա-  
պարեց մեղադրվողին ուղծամբ տաժանակիւր  
աշխատանքների: Մեղադրվածը բանտարկված է:

միշկ շատ լաւ հասկանում էր այդ թուլութեան  
սարսափելի հետեւանքները: Նա աւելացնում էր  
չարունակ դերի չափը, յետոյ անցաւ Laudanum-  
ից ափսոսի, ափսոսից ժողովի, մինչև որ  
վերջապէս հասաւ կոկաինին, այդ նորագոյն  
սարսափելի թմրանի, որ սպանեց նրան: Նա  
զրկվեց պարակտիկայից, կարողութիւնից, կնո-  
ջից (որ վշտամահ եղաւ) և, շարունակ աւելի  
ու աւելի ցած ընկնելով, սկսեց ապրել փողո-  
ցաջրիկի աղքատի նման, գիշերելով ցանկա-  
պատների տակ, կերակրվելով մուրաբացով ու  
գողացածով: Միայն մի ժողի ցանկութիւն, մի  
պահանջ էր մնացել նրա մէջ—որտեղից լինի  
կոկաին ձեռք գցել տանողը, հոգեւան սթափու-  
թիւնից ազատվելու համար: Իբրեւ նախկին բը-  
ժիշկ, նա տոմսակներ էր գրում զանազան բը-  
ժիշկների, որոնց անունները կարգում էր դռները  
վրա, և բժիշկների մէջ գործածական բառերով  
խնդրում էր տալ իրան որոշ չափով նարկոզ,  
ստորագրելով իր անունը, յետոյ իբրեւ զբաղ-  
ծառայ ինքը տանում էր տոմսակը և գրեթէ  
միշտ հանում էր նպատակին: Այդպիսի խա-  
բութիւններից մէկի ժամանակ նրան ձերբա-  
կալեցին և ուղարկեցին ոստիկանատուն: Այնտեղ  
երկու օր նարկոզ չը տուին նրան և նա մեռաւ  
երբորդ օրը սարսափելի տանջանքների մէջ:  
№ 530՝ բժիշկ Bourday, այդպէս է նշանակված  
նա թաղման պաշտօնատան պրեսի:

(Կը շարունակվի)



